

*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023


Մարտի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերոլոգիայի բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերոլոգիայի կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Մարտի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 2-5 աստիճանով:



Ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են Տավուշում $+18...+20^{\circ}\text{C}$, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ $+8...+10^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+18...+20^{\circ}\text{C}$, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ $+24...+26^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+15...+19^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $+8...+13^{\circ}\text{C}$, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ $+8...+10^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+14...+16^{\circ}\text{C}$, Գեղարքունիքում՝ $+9...+12^{\circ}\text{C}$ (Սեմյոնովկա՝ $+6^{\circ}\text{C}$), Լոռիում՝ $+14...+17^{\circ}\text{C}$, Արմավիրում՝ $+7...+9^{\circ}\text{C}$, Արարատում՝ $+9...+10^{\circ}\text{C}$, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ $+8...+11^{\circ}\text{C}$, նախալեռներում՝ $+14...+16^{\circ}\text{C}$:

Ամենացածր ջերմաստիճանները դիտվել են Տավուշում $0...-3^{\circ}\text{C}$, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ $-6...-8^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $0...+1^{\circ}\text{C}$, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ $+2...+5^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $-2...-5^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $-4...-9^{\circ}\text{C}$, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ $-4...-7^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $-2...-4^{\circ}\text{C}$, Գեղարքունիքում՝ $-5...-10^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $-3...-7^{\circ}\text{C}$, Արմավիրում, Արարատում՝ $0...-2^{\circ}\text{C}$, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ $-3...-8^{\circ}\text{C}$, նախալեռներում՝ $0...+1^{\circ}\text{C}$:


Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 8-30մմ (171-199%), Լոռիում՝ 8-19մմ (79-173%), Տավուշում՝ 8-10մմ (63-97%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 1-7մմ (14-60%), նախալեռներում՝ 5մմ (74%), Գեղարքունիքում՝ 6-18մմ (80-154%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 16-23մմ (98-106%), նախալեռներում՝ 7մմ (54%), Արմավիրում՝ 1-5մմ (21-73%), Արարատում՝ 6-11մմ, (116-134%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 20մմ, նախալեռներում՝ 17մմ (140%), Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 4-5մմ (22-55%), հովտային շրջաններում՝ տեղումներ չեն դիպվել:

Հանրապետությունում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ -8...-13°C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ -1...-5°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +1°C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Մարտի 10-ի դրությամբ հանրապետությունում ձյան ծածկի բարձրությունը Արագած բ/լ-ում կազմել է 119սմ, Ամբերդում՝ 45սմ, Անանուն լ/ք-ում՝ 16սմ, Ջերմուկում՝ 14սմ, Ապարանում, Հանքավանում՝ 13սմ, Սեմյոնովկայում՝ 9սմ, Մարտունիում՝ 8սմ, Ճամբարակում, Գավառում՝ 5սմ, Սևանում՝ 4սմ, Մասրիկում՝ 3սմ, Շորժայում՝ 1սմ, մնացած շրջաններում ձյան ծածկը բացակայել է:



Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները

Հովտային և նախալեռնային շրջաններում սկսվել են գյուղատնտեսական աշխատանքները: Կատարվել են պողպատյունների էր, խաղողի վազի այգեբաց, կարտոֆիլի դաշտում՝ վար:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնելու համար:

Աշնանացան ցորեն

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը շարունակել է գտնվել ձմեռային հանգստի շրջանում: Եղանակային պայմանները նպաստավոր էին ձմեռման համար, աշնանացանի թփակալման հանգույցում վրանգավոր ջերմաստիճաններ չեն գրանցվել: Առանձին լեռնային շրջաններում հողը սառած էր 34-50սմ խորությամբ: Միայն Գյումրիում և Սիսիանում բազմամյա միջին ժամկետներից 20-29 օր շուրջ աշնանացան ցորենի վեգետացիան վերսկսվել է:

Հովտային և նախալեռային շրջաններում աշնանացանը գտնվել է թփակալման փուլում: Աշնանացանի բարձրությունը փասնօրյակի վերջին կազմել է 10-12սմ:

Մերձավանում աշնանացանի դաշտում բույսի աճի և զարգացման համար անհրաժեշտ հողի խոնավության պաշարները 0-10սմ շերտում կազմել են 10մմ, 0-20սմ շերտում՝ 24մմ, որը բազմամյա միջին արժեքներից ցածր է 8-10մմ-ով:

Պտղապտուներ

Պտղապտուների վեգետացիան սկսվում է, երբ օդի միջին ջերմաստիճանը հաստատուն կերպով հասնում է $+5^{\circ}\text{C}$, սակայն ծիրանենու կենսաբանական հանգստի խորը չի և թեթև փաքացումների դեպքում կարող է դիտվել վեգետացիայի վաղ սկսում: Արարատյան դաշտում և առանձին նախալեռնային շրջաններում վեգետացիան սկսվել է մարտի 02.03-06.03-ին: Բազմամյա միջին ժամկետներից 10-20օր շուրջ պտղապտուների բողբոջները ուռչեցին:

Սյունիքի հովտային շրջաններում դիտվել է խաղողի վազի հյուսաշարժ:

